

Փոխըմբռնման հուշագիր

**Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության
և Արաբական Միացյալ Էմիրությունների ներքին գործերի նախարարության
կողմից տրամադրվող վարորդական վկայականների փոխադարձ ճանաչման
և փոխանակման մասին**

Նախաբան

Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Ներքին գործերի նախարարության, և Արաբական Միացյալ Էմիրությունները՝ ի դեմս Ներքին գործերի նախարարության (այսուհետ միասին՝ Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ),

հավատալով երկու Կողմերի միջև ամուր կապերին, ցանկանալով դյուրացնել այն քաղաքացիների տեղաշարժը, որոնք մյուս Կողմի պետության տարածք այցի կամ այնտեղ բնակության ընթացքում ունեն երկու պետությունների համապատասխան պաշտոնական մարմինների կողմից տրամադրված վարորդական վկայականներ,

հաշվի առնելով Ճանապարհային երթևեկության մասին 1968 թվականի նոյեմբերի 8-ի Վիեննայի կոնվենցիան և հիմնվելով փոխադարձության սկզբունքների վրա,

համաձայնել են հետևյալի մասին.

Հոդված 1

Վարորդական վկայականների ճանաչումը

Սույն Փոխըմբռնման հուշագրի իրականացման նպատակներով Կողմերից յուրաքանչյուրը ճանաչում է մյուս Կողմի կողմից այն քաղաքացիներին տրամադրված վավեր վարորդական վկայականը, որոնք ժամանում են ոչ բնակության նպատակով՝ պայմանով, որ վարորդական վկայականի տնօրինողը բավարարում է 2-րդ հոդվածում ներկայացված աղյուսակում նախատեսված՝

վարորդական վկայականների տարբեր կարգերի կապակցությամբ մյուս Կողմի սահմանած նվազագույն տարիքի հետ կապված պահանջները:

Հոդված 2

Վարորդական վկայականների փոխանակումը

Բնակության նպատակով ժամանող քաղաքացիների դեպքում յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի տրամադրած վարորդական վկայականի փոխանակման համար դիմող անձին ազատում է դրա հետ կապված տեսական և գործնական քննություններից: Այդ ազատումը սահմանափակվում է ստորև ներկայացված աղյուսակում նշված ավտոմեքենաների համար տրամադրվող վարորդական վկայականների կարգերով:

Հայաստանի Հանրապետություն	Արաբական Միացյալ Էմիրություններ
Կարգ	Կարգ
- «Բ» կարգ - «Դ1» ենթակարգ	- Թեթև մարդատար ավտոմոբիլներ՝

Աղյուսակում չնշված այլ կարգերի և ենթակարգերի դեպքում այդ անձինք պետք է տեսական և գործնական քննություններ հանձնեն՝ մյուս Կողմի պետության ազգային օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 3

Փոխանակման պայմանները

Դրույթները, որոնց համաձայն վարորդական վկայականները կարող են փոխանակվել, հետևյալն են.

1. Վարորդական վկայականի փոխանակման համար դիմող անձը պետք է ունենա կացության վավեր թույլտվություն:
2. Վարորդական վկայականը պետք է լինի վավեր:
3. Դիմող անձը պետք է բավարարի 2-րդ հոդվածում ներկայացված աղյուսակի՝ վարորդական վկայականների տարբեր կարգերի համար երկու

Կողմերի սահմանած նվազագույն տարիքային պահանջները՝ ազգային օրենսդրությանը և կարգավորումներին համապատասխան:

4. Վարորդական վկայականը, որը փոխանակվելու է, պետք է համապատասխանի նմուշներին (կից ներկայացված է հավելվածով):

5. Դիմող անձանց վարորդական վկայականը պետք է փոխարինվի վարորդական վկայականի համարժեք տեսակով, ինչպես սահմանված է 2-րդ հոդվածում ներկայացված աղյուսակում:

6. Վարորդական վկայականի փոխանակման համար դիմող անձը պետք է ներկայացնի իրավական թարգմանությունների հավաստագրված որևէ բյուրոյի կողմից տրամադրված՝ վարորդական վկայականի՝ մյուս Կողմի ազգային լեզվով իրավական թարգմանությունը:

7. Դիմող անձը պետք է անցնի պահանջվող բժշկական զննությունը:

8. Վարորդական վկայականի փոխանակումը կատարվում է՝ պահպանելով Կողմերի պետությունների ազգային օրենսդրության համաձայն պահանջվող ցանկացած այլ պայման և դրույթ:

9. Սույն Փոխըմբռնման հուշագրի դրույթները չեն կիրառվում Կողմերի իրավասու մարմինների կողմից տրամադրված վարորդական վկայականի՝ քաղաքացի չհանդիսացող տնօրինողի նկատմամբ:

Հոդված 4

Վարորդական վկայականների փոխանակումը

Դիմող անձը պահպանում է իր ազգային վարորդական վկայականը՝ պայմանով, որ Կողմերի համապատասխան իրավասու մարմինները մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով ներկայացնեն վարորդական վկայականի վերաբերյալ անհրաժեշտ տվյալները և տեղեկությունները:

Հոդված 5

Վարորդական վկայականի վավերությունը

Փոխանակման ներկայացված վարորդական վկայականի վավերության կամ իսկության վերաբերյալ որևէ կասկած ունենալու դեպքում փոխանակումն իրականացնող իրավասու մարմինը կարող է մյուս Կողմերի իրավասու մարմնից պահանջել ստուգելու այդ վարորդական վկայականի վավերությունը կամ իսկությունը դիվանագիտական ուղիներով:

Հոդված 6

Իրավասու մարմինները

Սույն Փոխըմբռնման հուշագրի իրականացման համար պատասխանատու իրավասու մարմիններն են՝

ա. Հայաստանի Հանրապետության կողմից՝

- Ներքին գործերի նախարարությունը:

բ. Արաբական Միացյալ Էմիրությունների կողմից՝

- Ներքին գործերի նախարարության Մեքենաների և վարորդների լիցենզավորման դաշնային գլխավոր տնօրինությունը:

Սույն Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում Կողմերից յուրաքանչյուրը մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով անհապաղ տեղեկացնում է իրավասու մարմինների ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 7

Համապատասխան ազգային օրենսդրության

փոփոխությունները և լրացումները

Սույն Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում Կողմերից յուրաքանչյուրը մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով տեղեկացնում է իր ազգային օրենսդրության հետ կապված ցանկացած փոփոխության կամ լրացման մասին:

Հոդված 8

Վեճերի կարգավորումը

1. Կողմերի միջև սույն ՓՀ-ի իրականացման հետ կապված ցանկացած վեճ կարգավորվում է բարեկամաբար՝ Կողմերի միջև դիվանագիտական ուղիներով իրականացվող բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

2. Սույն փոխըմբռնման հուշագրից բխող վեճի վրա չի տարածվում որևէ միջազգային կամ ներպետական օրենսդրության գործողություն, ոչ էլ տարածվում է ներպետական, օտարերկրյա կամ միջազգային դատարանի, արբիտրաժային տրիբունալի կամ երրորդ կողմի իրավազորությունը:

3. Վեճի առկայության ժամանակահատվածում Կողմերը պարտավոր են կատարել սույն ՓՀ-ով սահմանված իրենց բոլոր նախկին պարտավորությունները:

Հոդված 9

Ուժի մեջ մտնելը, փոփոխությունը և դադարեցումը


1. Սույն ՓՀ-ն ուժի մեջ է մտնում սույն ՓՀ-ն ուժի մեջ մտնելու համար ազգային օրենսդրությամբ պահանջվող համապատասխան ընթացակարգերի իրականացման վերաբերյալ վերջին ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու ամսաթվից 30 օր հետո և գործում է անորոշ ժամկետով, քանի դեռ Կողմերից որևէ մեկը մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով գրավոր չի ծանուցում այն դադարեցնելու իր մտադրության մասին՝ այդպիսի դադարեցման ամսաթվից առնվազն երեք ամիս առաջ:

2. Սույն ՓՀ-ում կարող են փոփոխություններ կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ՝ առանձին արձանագրություններ կազմելու միջոցով, որոնք սույն ՓՀ-ի անբաժանելի մասն են կազմում և ուժի մեջ են մտնում սույն ՓՀ-ի 9-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված միևնույն ընթացակարգերին համապատասխան:

3. Սույն ՓՀ-ի դադարեցումը որևէ ազդեցություն չունի սույն ՓՀ-ի դադարեցման ամսաթվից առաջ փոխանակված վարորդական վկայականների վավերության վրա:


Ստորագրված է Արու Դաբիում 2025 թվականի սեպտեմբերի 30-ին, երկու բնօրինակից, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն, ընդ որում, բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման հետ կապված տարաձայնություններ առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

**Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի
նախարարության կողմից՝**



**Արամյան Արագյան
Ներքին գործերի նախարար**


**Արաբական Միացյալ
Էմիրությունների ներքին գործերի
նախարարության կողմից՝**



**Գեներալ-լեյտենանտ Սեյֆ բին
Հայեդ Ալ Նահյան
Փոխվարչապետ, ներքին գործերի
նախարար**

Վարորդական վկայականի նմուշներ

Հայաստանի Հանրապետություն՝



Արաբական Միացյալ Էմիրություններ՝

 **United Arab Emirates** دولة الامارات العربية المتحدة

Driving License رخصة قيادة



License No. 33791 رقم الرخصة

Name **MOMMED AHMED MAHROOS ABDULLA** محمد أحمد مفرح عبد الله

Nation **EMIRATES** الجنسية الإمارات

Date of Birth 02-09-1988 تاريخ الميلاد

Issue Date 03-10-2006 تاريخ الاصدار

Expiry Date 14-09-2029 تاريخ الانتهاء

Place of Issue **Abu Dhabi** جهة الاصدار أبوظبي

ADTR 60007 سلطة الترخيص
Licensing Authority

Traffic Code No. 1000008090 الرقم المروري

Permitted Vehicles أنواع المركبات المصرح بقيادةها

			Light Vehicle

• This license should be with you when driving and should be presented on demand to the authorized person.
• يجب حمل الرخصة أثناء القيادة وإبرازها عند الطلب للجهات المختصة.

• Give way to ambulance, fire engine, police and police vehicles.
• يجب السماح للطوارئ وسيارات الإسعاف والمطافئ والشرطة والمركبات الرسمية والشرطة.



UAE



20 07 0067773 EPM

Memorandum of Understanding
on Mutual Recognition and Exchange of Driving Licenses Issued by
the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia
and
the Ministry of Interior of the United Arab Emirates

Preamble

The Republic of Armenia represented by the Ministry of Internal Affairs, and the United Arab Emirates represented by the Ministry of Interior (herein jointly referred as the “Parties” and separately as a “Party”);

Believing in the strong relations between the two Parties with desiring to facilitate the movement of the citizens, who are holding driving licenses issued by respective official authorities of both States during a visit to or residence in the territory of the State of the other Party;

Having regard to the Vienna convention on Road traffic of 8 November 1968 and relying on the principles of reciprocity.

Have reached the following:

Article 1
Recognition of Driving Licenses

For the purposes of implementing this Memorandum of Understanding, each Party shall recognize a valid driving license issued by the other Party to those citizens, who arrive not for the purpose of residence, provided that the holder of the driving license fulfills the requirements of minimum age laid down by the other Party in relation to the different driving license categories as stipulated in the table of Article 2.

Article 2

Exchange of Driving Licenses

For those citizens who arrive for the purpose of residence, each Party will exempt the applicant for exchange of a driving license issued by the other Party from the related theoretical and practical tests. This exemption will be limited to driving license categories for vehicles indicated in the following table:

Republic of Armenia	United Arab Emirates
Category	Category
- Category "B". Subcategory "D1".	- Light vehicles:

For other categories and subcategories not mentioned in the table, they are subject to theoretical and practical tests in accordance with the national legislation of the State of the other Party.

Article 3

Conditions of Exchange

The provisions under which driving licenses can be exchanged, are the following:

1. The applicant for exchanging a driving license shall hold a valid resident permit.
2. The driving license must be valid.
3. The applicant must fulfill the minimum age requirements laid down by both Parties for the different driving license categories as stipulated in the table of Article 2 in accordance with the national legislation and regulations.
4. The driving license which will be exchanged must be according to the specimens (attached annex).

5. The driving license of the applicants should be replaced with equivalent type of driving license as stipulated in the table of Article 2.

6. The applicant for exchanging a driving license must submit a legal translation of the driving license into the national language of the other Party, issued by any certified legal translation bureau.

7. The applicant must pass the required medical examination.

8. The exchanged of driving license is subject to any other terms and conditions that are required according to the national legislation of States of the Parties.

9. The provisions of this Memorandum of Understanding will not apply to the non-citizens of the holders of driving licenses issued by the competent authorities of the Parties.

Article 4

Driving Licenses Exchange

The national driving license of the applicant shall be retained, provided that the relevant competent authority of the Parties submits the necessary data and information of the driving license to the other Party through diplomatic channels.

Article 5

The Validity of Driving License

In case of any doubts related to the validity or authenticity of a driving license submitted for exchange, the competent authority carrying out the exchange may request the competent authority of the other Parties to verify the validity or the authenticity of that driving license via diplomatic channels.

Article 6

Competent Authorities

The Competent Authorities for implementation of this Memorandum of Understanding are:

a - For the Republic of Armenia:
- Ministry of Internal Affairs.

b - For the United Arab Emirates:
- Ministry of Interior – Federal General Directorate for Licensing Vehicle and Drivers.

In the scope of this MoU Each Party will promptly inform the other Party of any changes of competent authorities via diplomatic channels.

Article 7

Amendments and additions to the relevant national legislation

In the scope of this MoU each Party shall inform through diplomatic channels the other Party of any changes or amendments in its national legislation.

Article 8

Settlement of disputes

1. Any dispute between the Parties concerning the implementation of this MoU shall be settled amicably by negotiations or consultations through diplomatic channels.
2. The dispute arising from this MoU is not subject to any international or national laws and is not subject to any jurisdiction of a national, foreign or international court, arbitral tribunal, or third party.
3. During the period of dispute, the parties are obliged to fulfil all their previous obligations stipulated in this MoU.

Article 9

Entry into force, amendment and termination


1. This MoU shall enter into force 30 days following the date of receipt of the last notification through diplomatic channels on fulfillment of the relevant procedures required by the national legislation for entry into force of this MoU and will remain valid for an indefinite period of time unless either Party notifies the other in writing, through diplomatic channels, of its intention to terminate it, at least three months prior to the date of such termination.

2. Amendments may be made to this MoU by mutual written consent of the Parties, in the form of separate protocols, forming an integral part of this MoU and shall enter into force according to the same procedures mentioned in Paragraph 1 of Article 9 of this MoU.

3. The termination of this MoU shall not affect the validity of driving licenses exchanged before the date of termination of this MoU.


Signed in Abu Dhabi on 30 / 09 / 2025, in two original copies, each in the Armenian, Arabic and English languages, all texts being equally authentic. In case of divergence on the interpretation, the English text shall prevail.

For
Ministry of Internal Affairs of
the Republic of Armenia




Arpine Sargsyan
Minister of Internal Affairs

For
Ministry of Interior of
the United Arab Emirates




Lt. Gen. Saif Bin Zayed Al Nahyan
Deputy Prime Minister and
Minister of Interior

Driving license specimens
Republic of Armenia:



United Arab Emirates:

 United Arab Emirates دولة الامارات العربية المتحدة		
Driving License رخصة القيادة		
	License No. 53791 رقم الرخصة	محمد أحمد مخرّوس عبد الله
	Name MOHAMED AHMED MAHROOS ABDULLA الاسم	
	Nation EMIRATES الجنسية الإمارات	
	Date of Birth 02-09-1988 تاريخ الميلاد	
	Issue Date 03-10-2006 تاريخ الاصدار	
Expiry Date 14-09-2029 تاريخ الانتهاء		
سلطة الترخيص ADTR 60007 Licensing Authority	Place of Issue Abu Dhabi	جهة الاصدار أبوظبي

Traffic Code No. 1000008090	الرمز المروري								
Permitted Vehicles	الأنواع المسموح بها								
<table border="1"> <tr> <td></td> <td></td> <td>مركبة خفيفة Light Vehicle</td> <td></td> </tr> <tr> <td></td> <td></td> <td></td> <td></td> </tr> </table>			مركبة خفيفة Light Vehicle						
		مركبة خفيفة Light Vehicle							
- This license should be with you when driving and should be presented on demand to the authorized person. - يجب حمل الرخصة أثناء القيادة وإتاحتها عند الطلب للجهات المختصة. - Give way to ambulances, fire engines, police and police vehicles. - يجب السماح بالمرور للسيارات الإسعاف، سيارات الإطفاء، الشرطة والشرطة.									
									
UAE	 20 07 0067773 EPM								

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2025թ. սեպտեմբերի 30-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Արաբական Միացյալ Էմիրությունների ներքին գործերի նախարարության կողմից տրամադրվող վարորդական վկայականների փոխադարձ ճանաչման և փոխանակման մասին» փոխըմբռնման հուշագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ**



Երկր Մարդյան